



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

26.05.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-51/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2016թ. թիվ 1/73-1/17703-16 գրությամբ ներկայացված «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01845395) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-51/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2016թ. թիվ 1/73-1/14952-16 և 05.09.2016թ. թիվ 1/73-1/21416-16 գրությունները, «Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի 16.05.2016թ. թիվ 40 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 30.08.2016թ. թիվ 00239/16-410 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), «Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 16.05.2016թ. թիվ 40 և «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 30.08.2016թ. թիվ 00239/16-410 գրությունների հիման վրա, 25.05.2016թ. թիվ 1/73-1/14952-16

05.09.2016թ. թիվ 1/73-1/21416-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ներկայացրել Պատվիրատու 1-ի և Պատվիրատու 2-ի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Այսուհետև, ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2016թ. թիվ 1/73-1/17703-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բողոքարկման գործընթաց:

2. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 01.06.2016թ. թիվ 01/04.2/2120-16 և 13.09.2016թ. թիվ 01/04.1/3432-16 գրություններով դիմել է «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին, սակայն վերջինիս կողմից պատասխան չի ներկայացվել:

Մինչույն ժամանակ, «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 29.07.2016թ. ներկայացված բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և ՀՀՈՊՊԳՎ-ի միջև 23.06.2016թ. կնքված ARM-C ծածկագրով պայմանագիրը, Ընթացակարգը հայտարարել ապօրինի, ՀՀՈՊՊԳՎ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 17.08.2016թ. կայացրած թիվ ԳԲԽ-79/16 որոշմամբ Ընկերության 29.07.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է մասնակի, մասնավորապես, չեղյալ է հայտարարել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության միջև 23.06.2016թ. կնքված պայմանագիրը, իսկ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված մյուս պահանջները մերժել է:

3. «Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը 16.05.2016թ. թիվ 40 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ վերջինիս կողմից կազմակերպված «ԵՊՀԲԲ-ՊԸԾՁԲ-2016-Պ» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

Պատվիրատու 1-ը ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Ընկերության վերաբերյալ, որի հիման վրա պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն համաձայն որի՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 690 614 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

4. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն 30.08.2016թ. թիվ 00239/16-410 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է, որ վերջինիս կողմից «Երկու տարի ժամկետով ֆիզիկական պահպանության և ավտոմատացված ազդանշանային համակարգի միջոցով պահպանության ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ARM-T 021/15» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրահանգով մատակարարին և տրամադրվող ծառայություններին ներկայացվող պահանջների համար հստակ սահմանվել է, որ մասնակիցը պետք է համապատասխանի ոչ պակաս, քան 100 որակավորված պահնորդների առկայության վերաբերյալ պահանջին, որի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է արտացոլված լինի նաև Ընկերության կողմից հարկային մարմիններին ներկայացված վերջին հաշվետվության մեջ:

Ընթացակարգի արդյունքում 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

Հետագայում պարզվել է, որ Ընկերությունը որակավորման պահանջներին համապատասխանության մասին հայտարարագրով ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տվյալներ, քանի որ 30.11.2015թ. դրությամբ ունեցել է 88 վարձու աշխատող (100 որակավորված պահնորդի փոխարեն), ինչը հավաստվել է նաև ՀՀ ՊԵՏ

Մաշտոցի հարկային տեսչության թիվ 1163 տեղեկանքով, արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

5. ՍՑ-ԳԲԽ-51/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2016թ. թիվ 1/73-1/17703-16 գրությամբ ներկայացված «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը:

1. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից «Երկու տարի ժամկետով ֆիզիկական պահպանության և ավտոմատացված ազդանշանային համակարգի միջոցով պահպանության ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ARM-T 021/15» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1):

• Ընթացակարգ 1-ի 2-րդ չափաբաժնին (Օբյեկտների պահպանություն ֆիզիկական պահպանության միջոցով) մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, **30.11.2015թ.-ին** հայտ է ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

• Ընթացակարգ 1-ի հրավերին կից պայմանագրի նախագծի հավելված N 5 տեխնիկական առաջադրանքի առաջին սյունակում նշվել է՝ ոչ պակաս, քան 100 պրոֆեսիոնալ պահնորդների առկայություն (պահնորդի պրոֆեսիոնալ որակավորում ստացած), որն արտացոլված է հարկային մարմիններին ներկայացված ընկերության վերջին հաշվետվության մեջ:

• Ընկերության կողմից ներկայացվել է որակավորման պահանջների համապատասխանության մասին հայտարարագիր, որտեղ նշվել է, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ունի առնվազն 100 մարդ, որակավորված վարչական անձնակազմ, որը բավարարում կարգավորողի պահանջներին:

• Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի 25.02.2016թ. որոշմամբ՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ճանաչվել է **ընտրված մասնակից, ինչի վերաբերյալ հրապարակվել պայմանագիր կնքելու մասին որոշումը:**

• Պատվիրատու 2-ը 07.04.2016թ. էլեկտրոնային եղանակով դիմել է Ընկերության պահանջելով մինչև 19.04.2016թ. ներկայացնել հայտը ներկայացնելու պահի՝ 30.11.2015թ. դրությամբ գրանցված պահնորդի վերաբերյալ հարկային հաշվետվություն:

- Ընկերության կողմից պահանջված հաշվետվությունը չներկայացնելու արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.05.2016թ. կայացրել է որոշում «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին որակագրկելու վերաբերյալ:

- Պատվիրատու 2-ը 23.06.2016թ. պայմանագիր է կնքել երկրորդ տեղը զբաղեցրած ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության հետ:

- «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.07.2016թ. ներկայացված բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել Պատվիրատու 2-ի և ՀՀ ՈՊՊԳՎ-ի միջև 23.06.2016թ. կնքված պայմանագիրը, Ընթացակարգը հայտարարել ապօրինի, ՀՀ ՈՊՊԳՎ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

- Խորհուրդը 17.08.2016թ. կայացրած թիվ ԳԲԽ-79/16 որոշմամբ Ընկերության 29.07.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է մասնակի, մասնավորապես, չեղյալ է հայտարարել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և ՀՀ ՈՊՊԳՎ-ի միջև 23.06.2016թ. կնքված պայմանագիրը, իսկ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված մյուս պահանջները մերժել է:

- Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 25.07.2016թ. կայացվել է թիվ 277-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ին զգուշացում տալու մասին, որով Հանձնաժողովն ամրագրել է, որ Պատվիրատու 2-ի կողմից որակավորման պահանջներին համապատասխանության հայտարարագրի լրացման պահին նվազագույն աշխատակիցների առկայության առաջադրված պայմանը կարող է հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը որոշել է «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ին ֆիզիկական պահպանության միջոցով պահնորդական գործունեության մատակարարության՝ մատակարարին և տրամադրվող ծառայություններին ներկայացվող պահանջներում մինչև պայմանագրի կնքումն առնվազն 100 որակավորված պահնորդներ առկայության պահանջ ներկայացնելու գործողության համար «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հնարավոր խախտումների կանխման նպատակով տալ զգուշացում՝ հանձնարարելով ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ իրականացումից, որոնք կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

**2. «Երևանի պետական հենակերպային բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից
կազմակերպված «ԵՊՀԲԲ-ՊԸԾՁԲ-2016-Պ» ծածկագրով պարզեցված ընթացակարգ
(այսուհետք նաև՝ Ընթացակարգ 2):**

- Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների, **03.02.2016թ.** հայտ է ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:
- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (**03.02.2016թ.**) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 03.02.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 5-րդ կետով որոշում է կայացվել 1-ին չափաբաժնով 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին:
- Պատվիրատու 1-ը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ **2016թ. փետրվարի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **690 614 ՀՀ դրամի չափով:**
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը ճանաչվել է Ընթացակարգ 2-ի 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ Կենտրոնը 24.06.2016թ. թիվ 01/04.2/2499-16 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրել է հայտնել, անհրաժեշտ է արդյոք շարունակել Նախարարության 25.05.2016թ. թիվ 1/73-1/14952-16 գրությամբ ներկայացված «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրությունը:
- Ի պատասխան Կենտրոնի 24.06.2016թ. թիվ 01/04.2/2499-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2016թ. թիվ 1/73-1/17703-16 գրությամբ հայտնել է, որ գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեն ժամկետանց հարկային պարտավորություն ունեցող մասնակիցները՝ անկախ վերջիններիս կողմից գնման գործընթացում որևէ տեղ զբաղեցրած լինելու կամ չլինելու հանգամանքից, ուստի

անհրաժեշտ է նախաձեռնել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բողոքարկման գործընթաց:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձի որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

• «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից «Երկու տարի ժամկետով ֆիզիկական պահպանության և ավտոմատացված ազդանշանային համակարգի միջոցով պահպանության ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ARM-021/15» ծածկագրով բաց ընթացակարգի 2-րդ չափաբաժնին (Օբյեկտների պահպանություն ֆիզիկական պահպանության միջոցով) մասնակցելու նպատակով **30.11.2015թ.** հայտ ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն և ճանաչվել է Ընթացակարգ 1-ի ընտրված մասնակից:

Ընթացակարգ 1-ի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող հավելված N 5 տեխնիկական առաջադրանքով պահանջվել է՝ ոչ պակաս, քան 100 պրոֆեսիոնալ պահնորդների առկայություն (պահնորդի պրոֆեսիոնալ որակավորում ստացած), որն արտացոլված է հարկային մարմիններին ներկայացված ընկերության վերջին հաշվետվության մեջ:

Ընկերության կողմից ներկայացվել է որակավորման պահանջների համապատասխանության մասին հայտարարագիր, որտեղ նշվել է, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ունի առնվազն 100 մարդ, որակավորված վարչական անձնակազմ, որը բավարարում է կարգավորողի պահանջներին, սակայն պահանջված հաշվետվությունը վերջինիս կողմից ներկայացվել, արդյունքում՝ Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 04.05.2016թ. կայացրել է որոշում՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին որակազրկելու վերաբերյալ:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 29.07.2016թ. ներկայացված բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել Պատվիրատու 2-ի և ՀՀՈՊՊԳՎ-ի մինչև 23.06.2016թ. կնքված պայմանագիրը, Ընթացակարգ 1-ը հայտարարել ապօրինի, ՀՀՈՊՊԳՎ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 17.08.2016թ. կայացրած որոշմամբ Ընկերության 29.07.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է մասնակի, մասնավորապես, չեղյալ է հայտարարել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և ՀՀՈՊՊԳՎ-ի մինչև 23.06.2016թ. կնքված պայմանագիրը, իսկ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված մյուս պահանջները մերժել է:

Ի պատասխան Ընկերության 16.05.2016թ. դիմումի՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 25.07.2016թ. կայացվել է թիվ 277-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ին զգուշացում տալու մասին:

Համաձայն Որոշման՝ Հանձնաժողովն ամրագրել է, որ Պատվիրատուի կողմից որակավորման պահանջներին համապատասխանության հայտարարագրի լրացման պահին նվազագույն աշխատակիցների առկայության առաջադրված պայմանը կարող է հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը որոշել է «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ին ֆիզիկական պահպանության միջոցով պահնորդական գործունեության մատակարարի ընտրության՝ մատակարարին և տրամադրվող ծառայություններին ներկայացվող պահանջներում մինչև պայմանագրի կնքումն առնվազն 100 որակավորված պահնորդներ առկայության պահանջ ներկայացնելու գործողության համար «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հնարավոր խախտումների կանխման նպատակով տալ զգուշացում՝ հանձնարարելով ձեռնպահ մնալ այնպիսի գործողությունների իրականացումից, որոնք կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով Պատվիրատուի կողմից որակավորման պահանջներին համապատասխանության հայտարարագրի լրացման պահին նվազագույն կամ **առնվազն 100 աշխատակիցների** առկայության պայմանը խտրական է սահմանափակում է տվյալ գնման գործընթացին հնարավոր մասնակիցների մրցակցությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից թույլ տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում որպես կեղծ տվյալի ներկայացում:

• «Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՊՀԲԲ-ՊԸԾՁԲ-2016-Պ» ծածկագրով պարզեցված ընթացակարգի «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (03.02.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 03.02.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 5-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգ 2-ի 1-ին չափաբաժնով **3-րդ տեղ զբաղեցրած** մասնակից ճանաչել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին:

Պատվիրատու 1-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալները ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Ընկերության վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն **2016թ. փետրվարի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն՝ 690 614 ՀՀ դրամի չափով:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը ճանաչվել է Ընթացակարգ 2-ի 5-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ Կենտրոնը 24.06.2016թ. թիվ 01/04.2/2499-16 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրել է հայտնել, անհրաժեշտ է արդյոք շարունակել Նախարարության 25.05.2016թ. թիվ 1/73-1/14952-16 գրությամբ ներկայացված «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրությունը:

Ի պատասխան Կենտրոնի 24.06.2016թ. թիվ 01/04.2/2499-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2016թ. թիվ 1/73-1/17703-16 գրությամբ հայտնել է, որ գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեն ժամկետանց հարկային պարտավորություն ունեցող մասնակիցները՝ անկախ վերջիններիս կողմից գնման գործընթացում որևէ տեղ զբաղեցրած լինելու կամ չլինելու հանգամանքից, ուստի անհրաժեշտ է նախաձեռնել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բողոքարկման գործընթաց:

Խորհուրդը գտնում է, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 03.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցում ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,
- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Խորհուրդն արձանագրում է, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը**, սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ **խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի** ի հայտ գալու պայմաններում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ **03.02.2016թ.-ից** հաշվառված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր դեռևս առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2016թ. թիվ 1/73-1/17703-16 գրությամբ ներկայացված «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01845395) գնումների գործընթացին


մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական
ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել
դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Հայրապետյան Գևորգ

Անդամ՝



Բաղայան Սյունե